ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Խաչպար ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/60 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
14	Դիասեպտիկ -70	ИНТЕРСЕН ПЛЮС	<<Դիասեպտիկ -70>>, մաշկային հականեխիչ քառակոմպոնենտ էքսպրես-ախտահանիչ միջոց է, իրենից ներկայացնում է թափանցիկ, համասեռ, ներկված կամ չներկված հեղուկի տեսքով, սպիրտի և/կամ բուրանյութի յուրահատուկ հոտով կիրառման համար պատրաստ լուծույթ: Պահպանման ժամկետը՝ 5 տարի: Որպես ազդող նյութեր պարունակում է իզոպրոպիլ սպիրտ՝ 70,0 %, ունդեցիլ ամիդոպրոպիլ տրիմոնիում մետոսուլֆատ՝ 0,23 %, 2-ֆենօքսիէթանոլ՝ 0,30 %, ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ՝ 0,10 %, ինչպես նաև մաքրված ջուր և ֆունկցիոնալ այլ բաղադրիչներ, այդ թվում մաշկը խոնավացնող և փափկացնող: Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ տուբերկուլոզի հարուցիչը՝ թեստավորված M.terrae-ի վրա, բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների (ԲՄՊՎ) հարուցիչները՝ թեստավորված P.aeruginosa-ի վրա), վիրուսների՝ ընդերային և արտաընդերային Ա, Բ, Ց, Դ հեպատիտների, ՄԻԱՎ հարուցիչների, ցիտոմեգալովիրուսի, հերպեսի վիրուսների, գրիպի վիրուսների (այդ թվում

			«թռչնի», «խոզի»), պարագրիպի, ադենովիրուսների, ռոտավիրուսների, նորովիրուսների, էնտերովիրուսային վարակների՝ պոլիոմիելիտի, Կոքսակի, ECHO, կորոնավիրուսների, «ատիպիկ թոքաբորբի» (SARS) վիրուսների, ՍԾՎՀ հարուցիչների, Կանդիդա ցեղի սնկերի, դերմատոֆիտների, բորբոսասնկերի նկատմամբ: <<Դիասեպտիկ -70>> հականեխիչ միջոցն օժտված է ախտահանիչ, ճարպազերծող և դեզոդորացնող հատկություններով, ազդեցությունը՝ սկսած 15 վայրկյանից մինչև 3 ժամ տևողությամբ: Միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բուժանձնակազմի, պացիենտների, այլ կազմակերպությունների ու տարբեր ուղղվածության հաստատությունների աշխատողների, ինչպես նաև 10 տարեկանից բարձր երեխաների և մեծահասակ բնակչության կենցաղում ձեռքերի հիգիենիկ էքսպրես-ախտահանման համար: Միջոցը նախատեսված է բժշկական կազմակերպություններում վիրաբույժների և վիրաբուժական միջամտությունների, լուրջ ինվազիվ միջամտությունների, ծննդաբերության, մագիստրալ անոթների կաթետերավորման իրականացմանը մասնակցող բոլոր անձանց ձեռքերի մշակման համար, դոնորների արմնկային ծալքի մշակման համար, վիրաբուժական միջամտությունից և մաշկի ամբողջականության խախտմամբ այլ գործողություններից (պունկցիա, բիոպսիա) առաջ պացիենտների վիրահատական դաշտի մաշկի մշակման համար, ենթամաշկային, միջմկանային, ներերակային ներարկումներ իրականացնելուց կամ արյուն վերցնելուց առաջ պացիենտի ներարկային դաշտի մաշկի մշակման համար: Մատակարարման պահին ապրանքի պիտանիության ժամկետի առնվազն 2/3-ի առկայություն: Վտանգավորության աստիճանը՝ 4-րդ դաս: Ունի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) և ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ թիվ 2937-Լ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Խաչպար ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/60 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
14			